երեխաները հաց էին աղերսում։

—Ահա երկու քույրեր, վտիտ, տանջուած դէմքերով, պատառոտուն զգեստներով, երկու անմեղ հոգիներ, մէկը հիւանդ պառկած էր անկողնում, իսկ միւսը լալիս էր։

Անցնում եմ փողոցով. ահա պատերի առաջ նստած են քաղցի ճիրաններում գալարուող ծերունիներ, որոնք ծեր գլուխները քաշ են գցել և խորասուզուել ծանր խոհերի մէջ. պատկերը խիստ ցնցող է. աշխատում եմ խօսել, սիրտ տալ նրանց, տխուր են բոլորը և ընկճուած։ Նրանցից մէկը վշտոտ տօնով պատմում է ինձ կատարուած հարստահարութիւնների մասին։

Եւ ես խելագարի նման թափառում եմ այստեղ ու այնտեղ. մտնում եմ տները, անցնում փողոցով. ամեն տեղ նոյն սոսկալի տեսարանը, նոյն սրտաճմլիկ պատկերը։

—Մի հարս ամօթխածութեամբ պատմում էր ինձ.

—Եղբայր, մի ամիս է փորս հացի երես չի տեսել և նա իր շրթունքները սեղմելով, հազիւ կարողացաւ զսպել իր արտասուքը։

Ուշ երեկոյ էր. Ես անցայ գիւղից դէպի կանաչ արտերը. ինձ պատահեց մի գիւղացի՝ մօտ 50 տարեկան, յոգնած ու կնճռոտ դէմքով. նա վերադառնում էր սարից.

—Բարև եղբայր, ինչպէս է այս տարուայ ձեր դրութիւնը, հարցրի ես։

—Մի հարցներ եղբայր ջան, վատ է, շատ վատ. աւազակները մեր օջախը քանդեցին. անասուններս տարան. չորս զոյգ եզ ունէի, որ տանս հացը տալիս էին, այն էլ խլեցին ինձանից։ Վերջին խօսքերի միջոցին ես նկատեցի, շինականի աչքերը լցուեցին և արտասուքի երկու կաթիլներ. երկու խոշոր և ծանր կաթիլներ գլորուեցին նրա կնճռոտ դէմքի վրայ և նա լացով հեռացաւ ինձանից։

Բ. ՎԵՐԻՆ-ՔՐԴԵՐ

Դօվլաթաբադից քառորդ փարսախ հեռու, դէպի արևմուտք, բարձրանում են վիթխարի, ժայռոտ լեռնաշղթաներ, կանաչազարդ, կերտուն կատարներով, որոնք իրենց հրաշալի տեսքով ներկայացնում են այնպիսի մի հետաքրքիր պատկեր, որ հեռուից իրենց վրայ են գրաւում իւրաքանչիւր ճանապարհորդի հայեացքը։